սի հետ: ԺԹ. դարում վիմագիրն ընթերցուած է այսպէս. «Սուրբ Պռոկոպոս. զմեծ *տէր Յովհաննէս՝ չինուող եկեղեցւոյս,* որդի Դաւփին, *եղբայր* մեծ *իշխանին* Հասանայ, *յաղաւթս յիշեցէ՛ք»*[156]*: Քանի որ իշխանուհի Դօփի ամուսինը, ինչպէս գիտենք,* Հասան *անունն է կրել, ապա նրանց որդին, իրօք, չէր կարող (ըստ Հր. Աճառեանի՝ վերը նշուած դիտարկման*[157]*) նոյն կերպ կոչուել: Սակայն հակասութիւնն իրականում լուծելի է: Զբացառելով ԺԹ դարի ընթերցումների՝ երբեմն լրջօրէն սրբագրելի լինելու հանգամանքը, այս դէպքում պէտք է նաեւ նշել, որ* Դօփ *անձնանունով աղբիւրներում վկայուած է ամենեւին էլ ո՛չ միայն յայտնի իշխանուհին: Օր.՝ «քուերորդի սպարապետացն... Զաքարիայի եւ Իւանէի» «Մեծն» Գրիգորին չի կարող վերաբերուել «Թարգմանչաց» անուանումով յայտնի Աւետարանի (արտագրուած է «Թիւն ՈՁԱ* [=1232 թ.]»[158]*) նկարագարդման մասին հետագայի յիշատակարանի նշումը. «Զմեծ եւ զամենաւարհնեալ պարոնաց պարոն զ Գրիգոր* որդի Դաւփին *եւ զամենագովելի զբարեպաշտ ամուսին իւր զպարոն Ասփայն՝ զստացաւղք եւ զարդարիչք սուրբ Աւետարանիս յիշեսջի՛ք»*[159]*: Զնայած «որդի Դաւփին» արտայայտութեանը, բոլոր ուսումնասիրողներն իրաւացիօրէն իբրեւ ձեռագրի ստացողներ գիտեն ԺԳ. դ. վերջին – ԺԴ. դ. սկզբին իշխած ամուսիններ Գրիգոր Գ. Ծարեցուն՝ վախճանուած 1317-ից յետոյ, եւ Ասփային (Սիւնեաց Տարսայիճ Օրբէլեանի դուստր*[160]*)՝ վախճանուած 1311 թ.: Ուրեմն, այստեղ «որդի Դաւփին» է կոչուել նշանաւոր իշխանուհու* թոռան՝ *Հասանի որդին:*

Մի քանի այլ բնագրեր եւս «Դաւփի որդի» են կոչում արդէն ոչ թէ Ասփայի ամուսին Գրիգոր «Զինուորին»[161]*, այլ նրա հօրը՝ Հասան «Արիականին» (նրա կին Մամքանը դուստրն էր Արագածոտնի*

---

156 **Ս. վրդ. Զալալեանց**, *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան*, մասն Ա, Տփխիս, 1842, էջ 206. **Մ. եպս. Բարխուտարեանց**, *Արցախ*, էջ 195. *Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ.* աշխատասիրութեամբ **Յովհաննու եպս. Շահխաթունեանց Շահրիարեցւոյ**, հտ. Բ, Վաղարշապատ-Ս. Էջմիածին, 1842, էջ 362. ըստ՝ *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 128 (N 427):

157 Տե՛ս վերեւում, ծնթ. 20: Տեղին նշենք, որ Դօփ իշխանուհին արդէն 1225 թ. մի վիմագրում (Խաղարավանքի մատուռի հիւսիսային պատին արտաքուստ, 10 տող) ներկայանում է առանց ամուսնու՝ անգամ յիշատակման. «Թոփ :ՈՀԴ: *[=1225 թ.]*, եւ՝ *Դոփս*, դուստր Սարգսի, քոյր Զաքարէի եւ Իւանէի, *շինեցի* զգաւիթս եկեղեցոյս եւ զմատուռս. եւ *տվի* զԱւետարանս եւ Յանկաբակուց երկիրն եւ զիմ Հակուդենայ մատաղիսն յեկեղեցիս՝ *իմ* հոգոյ. Աստուածածնին ժամն :Գ: աւր արարէ՛ք» (*Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 127, N 420): Ուստի Հասան Ա-ի, թերեւս, վաղաժամ մահը կարելի է վերագրել 1224-1225 թթ. միջակայքին (հմմտ. վերեւում, ծնթ. 121):

158 ՄՄ, ձեռ. թիւ 2743, թ. 311ա: Հմմտ. **Բ. Ա. Ուլուբաբեան**, *Խաչէնի իշխանութիւնը*, էջ 317, ծնթ. 94: Նոյնն է եւ ձեռագրի 9բ թերթի յիշատակարանում՝ «ի թիւս :ՈՁԱ: *[=1232 թ.]* ծաղկազարդեցաւ սուրբ Աւետարանս» (Արտ. Մաթեւոսեանը 1984 թ. վրիպմամբ չի ընդգրկել այս բնագրերը *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*-ի ԺԳ. դարի հատորի մէջ):

159 ՄՄ, ձեռ. թիւ 2743, թ. 293ա. *ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, կազմեց **Լ. Ս. Խաչիկեան**, Եր., 1950, էջ 84: Հմմտ. **Գ. կաթ. Յովսէփեան**, *Խաղբակեանք կամ Պոզչեանք հայոց պատմութեան մէջ*, մասն I, Վաղարշապատ, 1928, էջ 436. **Բ. Ա. Ուլուբաբեան**, *Խաչէնի իշխանութիւնը*, էջ 317:

160 Ասփայի մայրը Հասան Զալալի դուստր Մինան էր (վախճանուած 1298 թ.). նրա մասին աղբիւրագիտական տուեալները տե՛ս **Բ. Ա. Ուլուբաբեան**, *Խաչէնի իշխանութիւնը*, էջ 226-227:

161 Այս Գրիգորի իշխանութեան արեւելեան սահմանագիծը նշող մի նոր տուեալ տե՛ս **Հ. Լ. Պետրոսեան, Լ. Վ. Կիրակոսեան, Վ. Ա. Սաֆարեան**, *Հանդաբերդի վանքը*, էջ 17 («Մռաւի փեշերին գտնուող Մեսիս վանքի իր մի ընդարձակ արձանագրութեան մէջ Հասանի որդի Գրիգորը նշում է, որ թէեւ Զարաբերդը (Զրաբերդը) գտնուում էր տաճիկների ձեռքին, իրեն յաջողուել է Աստծոյ օգնութեամբ պահել Ականան»):